



« ԱՐԳԵԼՈՑԱՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ »
ՊՈԱԿ
2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄՓՈՓ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

reserveparksngo@env.am

(010) 688204



**«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի Գիտության բաժնի կողմից
2024թ-ի ընթացքում կատարված աշխատանքների ամփոփ**

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպության ենթակայության տակ գտնվող «Ջրվեժ» անտառապարկում գիտաաշխատողների կողմից իրականացվել են էկոկրթական շրջայցեր՝ «Մխիթար Սեբաստացի», «Արեգնազան», «Անտիկյան», «Փոքրիկ Իշխան» և «Երեք խնձոր», կրթական համալիրների կրթահամալիրների, «Դաչա» ամառային ճամբարի, «Էվրիկա» դպրոց-ճամբարի, Հրանտ Դինքի 44, Աբովյանի թիվ 10 հիմն., Երևանի թիվ 186, Ջրվեժի միջնակարգ, Ակունքի միջնակարգ, Աբովյան քաղաքի թիվ 10 միջնակարգ, Վաղարշապատի Մ. Խորենացու անվան թիվ 10 ավագ, Երևանի 100 հիմն., Երևանի 187 միջն. և Երևանի Ա.Միկոյանի հիմն. դպրոցների, Երևանի տարածաշրջանային պետական քոլեջի «Անանիա Շիրակացու» ճեմարանի և «Բարի մամա» հասարակական կազմակերպության, Ջրվեժի, «Մերի Փոփինս», «Կրեատիվ Լաբբ», Նոր-Նորքի 110, «Լօլօ» մանկապարտեզների, «Սաննի» մանկական ակումբի, Հայ-ռուսական համալսարանի, Աուտիզմ ազգային հիմնադրամի, «Տարոն» գեղարվեստի կենտրոնի, «Էկոկրթարան»-ի, «Ծիլ բուսաց» զարգացման կենտրոնի և «Լեռնամանիա» արշավախմբի սաների հետ:

«Վայրի բնության միջազգային օրվա» կապակցությամբ Կազմակերպության գիտության բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է միջոցառում Կոտայքի մարզի Ձորաղբյուրի Վ. Կարապետյանի անվան միջն. դպրոցի աշակերտների համար: Միջոցառման շրջանակներում քննարկվել է օրվա կարևորության և Կազմակերպության ենթակայության տակ գտնվող տարածքների վայրի բուսականության, և էնդեմիկ միջատ հանդիսացող Արարատյան որդան կարմիրի - *Porphrophora hammelii* Brandt մասին:

Անտառների միջազգային օրվա կապակցությամբ նկարահանվել և հրապարակվել է տեսահոլովակ «Ջրվեժ» անտառապարկի և Բերդի «Սորաններ» դենդրոպարկի հիմնադիր Հրանտ Ավագյանի կյանքի և գործունեության մասին:

Ապրիլի 16-ին, Երկրի օրվան ընդառաջ իրականացվել է դաս-միջոցառում, որն ամփոփվել է ծառատունկով: Միջոցառումն իրականացվել է քաղաք Աբովյանի թիվ 2-

րդ դպրոցի աշակերտների հետ: Ծառատունկի շրջանակներում ստեղծվել է բարդիների ծառուղի՝ 52 գծմ երկայնքով:

Ապրիլի 26-ին, Կազմակերպության գիտության բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է էկոկրթական և էկոդաստիարակչական դասընթաց՝ «Առանց թափոնների միջավայր» խորագրով: Միջոցառման շրջանակներում ներկայացվեց աշխարհում թափոնների կայուն կառավարման և վերամշակման անհրաժեշտության խնդրի լուծման մասին: Ինչպես նաև աշակերտները փորձեցին թափոնները վերաիմաստավորել՝ իրենց գաղափարներով:

Հայտարարված գարնանային համապետական ծառատունկի շրջանակում ծառատնկումներ են իրականացվել Կազմակերպության Բերդի «Սորաններ» դենդրոպարկում, «Զիկատար» պետական արգելավայրում, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում և «Զրվեժ» անտառպարկում:

Կազմակերպության գիտության բաժնի և Ա.Թախտաջանի անվան բուսաբանական ինստիտուտի աշխատակիցների հետ, «Զրվեժ» անտառպարկում իրականացվեց վայրի ծիրանենու ծաղիկների հավաք՝ լաբորատոր պայմաններում ստուգելու ծաղկի փոշեհատիկները:

Մայիսի 01-ին, Ստեփանավանի արվեստի դպրոցի սաների հետ համատեղ իրականացվեց միջոցառում Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկի սեզոնային բացման կապակցությամբ:

«Դաչա» ամառային ճամբարի սաների հետ «Զրվեժ» անտառպարկում իրականացվել է էկոարշավ:

Կենսաբազմազանության միջազգային օրվա առթիվ «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցների կողմից «Զրվեժ» անտառպարկում, դպրոցականների համար իրականացվել է էկոկրթական միջոցառում: Միջոցառման շրջանակներում աշակերտները իրականացրին սոճու սերմնացան հատուկ նախատեսված սերմնաբաժակների մեջ և վերջում ամփոփվեց քայլարշավով, որի ժամանակ ներկայացվեց անտառպարկի կենսաբազմազանությունը:

«ՄԻՐ» հեռուստաընկերության կողմից, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում նկարահանվել է տեսահոլովակ՝ դենդրոպարկում փոշոտման շրջանի մասին:

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում այցելուների մուտքը ավելի հարմարավետ դարձնելու համար, հերթեր չգոյացնելու նպատակով, վերակառուցվել և նոր համակարգ է տեղադրվել:

Կազմակերպության ենթակայությամբ գործող «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրում և Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում, Վանաձորի Հ. Թումանյանի անվան և Երևանի մանկավարժական պետական համալսարանների ուսանողների հետ անցկացվել է ուսումնական պրակտիկա:

Սոցիալական ցանցերի միջոցով կատարվել է իրազեկումներ Կազմակերպության ենթակայության տակ գտնվող տարածքներում ամենօրյա կատարված աշխատանքների վերաբերյալ, նկարահակվել են իրազեկման տեսահոլովակներ:

Հունիսի 08-ին, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի «ՍոֆթԿոնստրակտ» ՓԲԸ-ի և «Ջրվեժ» անտառպարկի աշխատակիցների մասնակցությամբ իրականացվել է շաբաթօրյակ: Մաքրվել են անտառպարկի շուրջ 50 հեկտար տարածքը, ճանապարհները և լիճը, ինչպես նաև տնկվել են տոսախի և արմավաշուշանի թփեր:

«ՄԻՐ» հեռուստաընկերության կողմից նկարահանվել է «Էրեբունի» պետական արգելոցը և արգելոցում աճող վայրի ցորենները, լուսաբանելով ցորենների կարևորությունը, աճելավայրը և պահպանվող տարածքում իրականացվող աշխատանքները:

Կազմակերպության գիտության բաժնի աշխատակիցների ուղեկցությամբ «Ջրվեժ» անտառպարկում պրակտիկա են անցկացրել Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Աշխարհագրություն» մասնագիտության 2-րդ կուրսի 9-ը ուսանողներ:

Պրակտիկայի ընթացքում ուսանողներին ներկայացվել է Կազմակերպության ենթակայությամբ գործող բնության հատուկ պահպանվող տարածքները և պահպանվող տարածքները, մասնավորապես «Ջրվեժ» անտառպարկը:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցների ուղեկցությամբ «Էրեբունի» արգելոց են այցելել Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հյուրեր՝ Ճապոնիայի Կիոտոյի և Ռյուկոկու համալսարանների բուսաբուծության էվոլյուցիայի լաբորատորիայի գիտնականները:

Նպատակն էր վայրի ցորենների առանձնահատկությունների ուսումնասիրությունը:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի, Հայաստանի Կովկասի հիմնադրամի և Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտի համագործակցության շնորհիվ, «Էրեբունի» պետական արգելոցում իրականացվել է գիտարշավ, որի արդյունքում կատարվել է ֆլորայի ուսումնասիրություն և տեղադրվել են փորձահրապարակներ: Համագործակցությունը կրելու է շարունակական բնույթ:

Կազմակերպության նախաձեռնությամբ զբոսաշրջության ոլորտի 9 ներկայացուցիչներն օգոստոսի 08-ից 09-ը ճանաչողական այց են կատարել Բերդի «Սորաններ» դենդրոպարկ և «Զիկատար» պետական արգելավայր՝ ծանոթանալու արգելավայրի կենսաբազմազանությանը, ծառուտների պատմությանը և տեղական բնության առանձնահատկություններին:

Միջոցառման նպատակն էր էկոզբոսաշրջության նախադրյալների գնահատումը և առկա ռեսուրսների օգտագործումը:

Այցի մասնակիցները Կազմակերպության տնօրեն Լևոն Տեր-Սիմոնյանի ուղեկցությամբ այցելել են դենդրոպարկի տնկարան, տեղում ծանոթացել տնկված ծառատեսակներին, քննարկել դրա բարեկարգման աշխատանքները, ներուժը, այնուհետև մասնակիցները տեղադրել են թույլա թփատեսակի կտրոններ:

«Զիկատար» պետական արգելավայրի անտառագետի ուղեկցությամբ իրականացվել է քայլարշավ, որի շրջանակներում մասնակիցները ծանոթացել են արգելավայրի բուսականությանը, ծառուտների պատմությանը:

«Զիկատար» պետական արգելավայրի այցելությունների կենտրոնի քննարկումների սրահում աշխատակիցները ներկայացրել են ՊՈԱԿ-ի ենթակայությամբ գործող տարածքների մասին տեղեկատվություն, որից հետո ոլորտի ներկայացուցիչները քննարկում են ունեցել էկոտուրիզմի զարգացման պոտենցիալը Բերդի «Սորաններ» դենդրոպարկում և «Զիկատար» պետական արգելավայրում թեմայով և հանդես են եկել առաջարկություններով:

Միջոցառումն ավարտվել է էկոգրիչների անվանական տնկմամբ համապատասխան սերմնաբաժակներում, որը ՊՈԱԿ-ի ավանդույթներից է:

Երիտասարդության միջազգային օրվա կապակցությամբ իրականացվող շարունակական միջոցառումների շրջանակներում Կազմակերպության ենթակայությամբ գործող «Զիկատար» պետական արգելավայրի նախաձեռնությամբ,

«Կողբի գեղարվեստի դպրոց» ՀԿ-ի աջակցությամբ, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Նոյեմբերյանի անտառտնտեսություն» մասնաճյուղի դպրոցական անտառպետության ուսումնական բազայի և հարակից տարածքներում անց է կացվել էկոկոլմնորոշման հերթական մրցույթը: Էկոկոլմնորոշման մրցույթին մասնակցել են 15 մասնակիցներ:

Էկոկոլմնորոշումը բնաճանաչողական, էկոկրթական խաղ-մրցույթ է, որն օգնում է ճանաչել և զանազանել շրջակայքում աճող ծառաթփատեսակները, կոլմնորոշվել տեղանքում քարտեզի միջոցով, գտնել նպատակակետերը: Մրցույթին մասնակցում էին Կողբի գեղարվեստի դպրոցի, Թումո Կողբի սաները, Նոյեմբերյան համայնքապետարանի աշխատակիցներ, Նոյեմբերյան համայնքի ակտիվ երիտասարդներ:

Կազմակերպության ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառպարկում, ՀՀ Կենդանաբանության ինստիտուտի աշխատակիցները իրականացրել են տարածքում առկա մակաբույծների մոնիթորինգ, որի շրջանակում վերցրել են փորձանմուշներ՝ լաբորատոր պայմաններում ստուգելու նպատակով:

Հանրային հեռուստաընկերությունը թեմատիկ նկարահանում է իրականացրել Կազմակերպության ենթակայությամբ գործող «Էրեբունի» պետական արգելոցում: Արգելոցում Հանրային հեռուստաընկերության թեմատիկ նկարահանման ընթացքում կազմակերպության գիտության բաժնի աշխատակիցները հանրության ուշադրությանն են ներկայացրել արգելոցում աճող վայրի ցորենները, դրանց առանձնահատկությունները:

Հայաստանում երկրորդ անգամ անցկացված «Ռենջեր 2024» մրցանակաբաշխությունը կազմակերպվել է Կազմակերպության ենթակայությամբ գործող «Զիկատար» պետական արգելավայրում:

Սեպտեմբերի 13-ին բնության հատուկ պահպանվող տարածքների օրվա կապակցությամբ, «Ջրվեժ» անտառպարկում, շրջակա միջավայրի նախարարությունը և «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը համատեղ կազմակերպել էին միջոցառում:

Միջոցառմանը մասնակցում էին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Բնօգտագործման տնտեսագիտություն» մասնագիտությունն

ընտրած ուսանողները, Արարատի տարածաշրջանային պետական քոլեջից, մայրաքաղաքի և մարզերի տարբեր դպրոցների սաներ:

Միջոցառման ընթացքում ներկայացվեց պահպանվող տարածքներում էկոզբոսաշրջության հնարավորությունները, բնության մեջ մարդկանց վարքի ու առաջին բուժօգնության կանոնները, պահպանվող տարածքներում էկոզբոսաշրջությանն առնչվող քաղաքականությանը, հնարավորություններին, մարտահրավերներին:

Կազմակերպության մասնագետների ուղեկցությամբ քայլարշավ է անցկացվել անտառապարկի ողջ տարածքում, որի ընթացքում մասնակիցները բացահայտել են անտառապարկի լճակը, ճեմուղիներն ու եզակի ծառատեսակները:

Միջոցառմանն առավել ակտիվ մասնակցություն ցուցաբերածները խրախուսվել են բնապահպանական նվերներով:

Միջոցառումը լուսաբանվել է «Հանրային» հեռուստաընկերության կողմից:

Կազմակերպության ենթակայությամբ գործող «Զրվեժ» անտառապարկում, Երևանի տարածաշրջանային N1 քոլեջի լուսանակչություն բաժնի 2-րդ կուրսի ուսանողները անցկացրել են իրենց գործնական պրակտիկան՝ որսալով անտառապարկի գունային երանգները:

«ՄԻՐ» հեռուստաընկերության և «ՆՅՈՒՋ ԷՅ ԷՄ» լրատվական կազմակերպության կողմից «Որդան կարմիր» պետական արգելավայրում կազմակերպվել է լրագրողների շրջայց՝ որդան կարմիր միջատի վերաբերյալ իրազեկվածության նպատակով:

«ԱՐՄԱԼՈՒՐ» հեռուստաընկերության կողմից նկարահանվել է «Զրվեժ» անտառապարկում հրդեհավտանգ շրջանը, անտառային հրդեհների կանխարգելման պայքարի դեմ տեսանյութ:

Զբոսաշրջության միջազգային օրվա կապակցությամբ Շրջակա միջավայրի նախարարության «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ը իրականացրել է էկոկրթական միջոցառում Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի զբոսաշրջության բաժնի ուսանողների հետ:

Միջոցառման թեման հետևյալն էր՝ «Էկոտուրիզմը բնության հատուկ պահպանվող տարածքներում», որի շրջանակներում քննարկվեց էկոտուրիզմի դերը պահպանվող տարածքներում և դրանց առանձնահատկությունների մասին:

Միջոցառման ընթացքում ակտիվ ուսանողներին տրվեցին Կազմակերպության ենթակայությամբ գործող տարածքների մուտքի տոմսեր:

Եվ վերջում ամփոփվեց խորհրդանշական ծառատունկով: Քոլեջի բակում տնկվեց Կազմակերպության կողմից նվիրված Եղևնի փշոտ ծառատեսակ: Միջոցառմանը մասնակցում էին 30 ուսանողներ:

Կազմակերպության գիտության բաժնի աշխատակիցը, սեպտեմբերի 30-ին մասնակցել է ՄԱԿ-ի կենսաբազմազանության մասին կոնվենցիայի մեկնարկային աշխատաժողովին:

Գիտության բաժնի աշխատակիցների կողմից անցկացվել է էկոկրթական շրջայց Ա. Շիրակացու ճեմարանի սաների հետ, որի ընթացքում ներկայացվել է Կազմակերպության «Ջրվեժ» անտառպարկի կենսաբազմազանությունը: Էկոշրջայցին մասնակցում էին 15 սան:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի և «Էկոկրթարան»-ի միջև կնքված համագործակցության շրջանակներում, Էկոկրթարանի կողմից «Ջրվեժ» անտառպարկում իրականացվել է էկոկրթական դասընթաց՝ «Ծառերը մանրադիտակի տակ» թեմայով: Միջոցառմանը մասնակցել են 25 սաներ:

«Ջրվեժ» անտառպարկում էկոկրթական դասընթաց-միջոցառում է անցկացվել Կոտայքի մարզի, Ձորաղբյուրի միջն. դպրոցի աշակերտների հետ: Ուսումնասիրվել է ֆլորայի և ֆաունայի միջև կապը և դրանց դերը, որին մասնակցում էին 30 աշակերտներ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի կողմից Բերդի «Սորաններ» դենդրոպարկում իրականացվել է աշնանային ծառատունկ: Ծառատնկման աշխատանքներին մասնակցում էին Կազմակերպության աշխատակիցները՝ ի դեմս տնօրեն Լևոն Տեր-Սիմոնյանի և Բերդի «Սորաններ» դենդրոպարկի պետի, ինչպես նաև Բերդի բազմագործառության քոլեջի թվով 20 ուսանողները և Բերդի մշակութային հասարակական կազմակերպության թվով 15 կամավորները: Միջոցառման խորագիրն էր արդեն Կազմակերպության համար դարձած կարգախոսը՝

ԵՍ ՔԵՉ՝ ԽՆԱՄՔ,

ԴՈՒ ԻՆՁ՝ ԹԹՎԱԾԻՆ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցների կողմից անցկացվել է էկոկրթական դասընթաց-շրջայց Ջրվեժի մանկապարտեզի սաների համար: Շրջայցի ընթացքում երեխաները ծանոթացել են անտառապարկի ծառերի տեսակների հետ և բնության մեջ վարքագծի կանոններին:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի և Շառլ Ազնավուրի անվան քոլեջի միջև կնքված հուշագրի համաձայն քոլեջի թվով 15 ուսանողներ «Ջրվեժ» անտառապարկում անցկացրել են իրենց արտադրական պրակտիկան և ծանոթացել անտառապարկի կենսաբազմազանությանը:

Կովկասի բնության հիմնադրամի նախաձեռնությամբ /CNF/ նոյեմբերի 13-15-ը Վայոց ձորի մարզի «Արփա» պահպանվող լանդշաֆտի Եղեգնաձորի այցելուների կենտրոնում կայացած ՇՄՆ կազմում գտնվող ԲՀՊՏ-ների զբոսաշրջության մասնագետների համար մասնագիտական կարողությունների զարգացման հանդիպում-սեմինարին մասնակցություն է ունեցել «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի էկոտուրիզմի մասնագետը՝ ներկայացնելով Կազակերպության առանձնահատկությունները և զբոսաշրջային ներուժը:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի և «ՆԻԳՄԱ» ակումբի միջև համատեղ համագործակցության շրջանակում «Ջրվեժ» անտառապարկում կազմակերպվել են ուսուցողական խաղեր. երեխաները սովորել են անտառային հմտություններ և կողմնորոշում բնության մեջ:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ենթակայությամբ գործող «Ջրվեժ» անտառապարկում ստեղծվել են ամանորյա նկարահանման նոր տաղավարներ, ըստ Կազակերպությունում գործող ծառայությունների:

«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գիտության բաժնի աշխատակիցները Ձորաղբյուրի միջև դպրոցի թվով 45 աշակերտների հետ իրականացրել են միջոցառում-քննարկում «ՄԵՐ ՇՐՋԱԿԱՅՔԸ ԱՌԱՆՑ ԹԱՓՈՆՆԵՐԻ» թեմայով:


Միջոցառման շրջանակում քննարկվեց թափոնների դերը աշխարհում, դրանց արդյունավետ կառավարման, վերամշակման անհրաժեշտության խնդրի և լուծման ուղիների վերաբերյալ հարցերը: Միջոցառմանը աշակերտները փորձեցին թափոնները վերաիմաստավորել՝ իրենց գաղափարներով:


Կազմակերպության նախաձեռնությամբ «Զիկատար» պետական արգելավայրում նոր զբոսաշրջային երթուղի նախագծելու և արահետների կահավորման նպատակով «Արահետներ փոփոխության համար» ՀԿ-ի կողմից իրականացվել է ճանաչողական այց:

«ՖԼԻՔԵՐ ՖԼԱՅ» ընկերության կողմից լուսանկարահանվել և հրապարակվել է աշնանային Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկը:

Կազմակերպության ենթակայության տակ գտնվող «Զրվեժ» անտառպարկում հունվարի 01-ից մինչև դեկտեմբերի 13-ը ունեցել ենք թվով 50.102, Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկում թվով 45.425, Բերդի «Սորաններ» դենդրոպարկում թվով 539 այցելուներ և «Զիկատար» պետական արգելավայրում 70:







«Էրերունի» պետական արգելոց

Արգելոցի տարածքում տարածված հազվագյուտ անհետացող և ՀՀ Կարմիր գրքում գրանցված տեսակների գիտական ուսումնասիրությունների և մոնիթորինգ իրականացնելու արդյունքում պարզվեց, որ արգելոցի ֆլորան փոփոխություն չի կրել: Դիտարկումների արդյունքով բուսականությունը փառթամ էր՝ ինչը պայմանավորված է 2024 թվականի եղանակային պայմաններով՝ տեղումներով:

Գիտարշավը իրականացվել է երթուղային եղանակով, հատկապես աչքի էր ընկնում ՀՀ կարմիր գրքում գրանցված Հացազգիներից Poaceae՝ Ցորեն Բետուականը-*Triticum boeoticum* Bolss, որը՝ գերակշռում էր առաջացնելով բարձր բուսուտներ: Ցորեն ուրարտուն-*Triticum urartu* Tumanian ex Gandilyan և Ցորեն արարատյանը-*Triticum ararticum* Jakubz շատ քիչ հանդիպեցին՝ վերջիններս հանդես էին գալիս որպես առանձնյակներ:

Այս տարի հատկապես աչքի էր ընկնում և զգալի տարածքներ էր զբաղեցնում Բարդաձաղկավորներից-Asteraceae՝ Վարդատերեփուկ մուշկայինը-*Amberboa moschata* (L.)D: Տերեփուկ երևանյանը-*Centaurea erivanensis* (Lipsky) Bordz. և Հովանոցավորներից Apiaceae-Ակտինոլեմա խոշորաբաժակը *Actinolema macrolema* Boiss հանդիպում էին օջախներով:

Աշնանային ուսումնասիրություններ իրականացնելու ընթացքում արգելոցի տարածքում արածեցման դեպքեր չգրանցվեց, չարձանագրվեց նաև կենդանիների ոտնահետքեր և արտաթորանք:

2024 թվականի գիտարշավի ընթացքում հավաքված հերբարիումները թարմացվում են և ճշտվում ցուցակները:



«Որդան կարմիր» պետական արգելավայր

«Որդան կարմիր» պետական արգելավայրի Ջրառատի և Արագափի տեղամասերում բուսականությունը ճնշված էր:

Ջրառատի տեղամասում ճանապարհից 400մ դեպի արգելավայր նկատվում էր Որդանախտոը-Aeluropus, վերջիններս ծաղկած էին և հանդես էին գալիս առանձնյակներով: Նախկինում հրդեհված տարածքում Որդանախտոը տարածված էր մասսայական: Տեղամասում դոմինանտ էր եղեգ սովորականը-Phragmites australis :

Արագափի տեղամասում բուսականությունն ավելի փառթամ էր: Այստեղ ևս Որդանախտոը հանդես էր գալիս առանձնյակներով, որոշ հատվածներում տարածված էր մասսայական:

2024 թվականի կատարած ֆլորայի ուսումնասիրությունների արդյունքում արգելավայրի երկու տեղամասերում էլ Գաղձ-Cuscuta չհանդիպեց: Ուխտափուշ սովորականը-Alhagi pseudoalhagi նախորդ տարիների համեմատությամբ ավելի քիչ էր:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում արգելավայրի ֆլորան փոփոխություն չի կրել: Հավաքագրված նյութերի հիման վրա պատրաստվում են հերբարիումներ և թարմացվում ցուցակները:

Կազմակերպության գիտաշխատողների կողմից 2024թ. սեպտեմբերին «Որդան կարմիր» պետական արգելավայրում իրականացվել է որդան կարմիր միջատի հաշվառում և մոնիթորինգ:

Կատարվել է Որդան կարմիր-Porhyrophora hammelii Brandt միջատի հաշվառում արգելավայրի երկու տեղամասերում: Հարկ է նշել, որ եղանակային պայմանները անբարենպաստ էին միջատի հաշվառումը լիարժեք իրականացնելու համար: Ջրառատի տեղամասում հաշվառումն իրականացվել է պատահականության սկզբունքով ընտրված 100մ² (10X10) մակերես ունեցող փորձահրապարակում, որտեղ հաշվառվել է 86 անհատ: Արագափի տեղամասում հաշվառումն իրականացվել է նույն սկզբունքով, որտեղ հաշվառվել է 68 անհատ: Անհրաժեշտ է նշել, որ Որդան կարմիր միջատը առավել շատ նկատելի էին այն հատվածներում, որտեղ որդանախտոը գերակշռում էր մյուս բուսատեսակներին:

Իրականացվել է Որդանախոտի արմատների զննում, ինչից էլ պարզ է դարձել, որ ցիստերի հիմնական մասը դատարկ է և միջատները դուրս են եկել հողի մակերես, իսկ ցիստերի մի մասը դեռ ամբողջական էին:

Աշնանային ուսումնասիրությունների ընթացքում արածեցման դեպքեր չգրանցվեց, չարձանագրվեց նաև կենդանիների ոտնահետքեր և արտաթորանք:

Շրջայցի ժամանակ արգելավայրի երկու տեղամասերը մաքրվում էին քամուց բերված կենցաղային աղբից:



«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայր

Ս.թ. հուլիս ամսին իրականացվել է գիտարշավ «Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրում նախապես մշակված երկու երթուղիներով, իրականացվել է ֆլորայի ուսումնասիրություն, որն անցկացվել է 2100-2600 մետր

բարձրություններում: Բուսականությունը փարթամ էր, որտեղ գերակշռում էին՝ Բարդաձաղկավորների-Asteraceae, Խաչաձաղկավորների-Brassicaceae, Լորագգիների-Fabaceae, Շրթնագգիների-Lamiaceae ընտանիքների պատականող անոթավոր բույսերի ներկայացուցիչները: Ծառաթփատեսակներից հանդիպում էին Վարդագգիների-Rosaceae, Ուռագգիների-Salicaceae, Կեչագգիների-Betulaceae ընտանիքներին պատականող ծառաթփատեսակները:

Գիտարշավի ընթացքում հավաքվել է հերբարիում՝ 42 թերթ, տեսակները ճշտելու և ցուցակները թարմացնելու նպատակով:

Մարմարիկ գետի հունը վարար էր, ջրհավաք ավազանի մակարդակը նախորդ տարիների համեմատությամբ բարձր էր:



«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի ծառաթփատեսակների կազմը

N	Ծառաթփատեսակները ըստ ընտանիքների (լատիներեն-հայերեն)	Կենսաձև
	Angiospermae – Ծածկասերմեր	
	Berberidaceae – Կծոխուրագգիներ	
	Berberis orientalis C. K. Schneid – Կծոխուր արևելյան կամ Ծորենի արևելյան	ՏԹ
	Betulaceae – Կեչագգիներ	
	Betula litwinowii A. Doluch.– Կեչի Լիտվինովի	ՏԾ
	Betula pubescens Ehrh. – Կեչի թավոտ	ՏԾ
	Betula pendula Roth. – Կեչի կախվող (լացող)	ՏԾ
	Betula verrucosa Ehrh. – Կեչի ելունդավոր	ՏԾ
	Carpinus betulusL. – Բոխի սովորական	ՏԹ
	Caprifoliaceae – Ցախակեռասագգիներ	
	Lonicera caucasica Pall.– Ցախակեռաս կովկասյան	ՏԹ
	Viburnum lantana L.– Բոնչի գերիմաստի	ՏԹ

	Ericaceae - Հավամբրգազգիներ	
	Rhododendron caucasicum Pall. - Մրտավարդ կովկասյան	ՏԹ
	Vaccinium myrtillus L. - Հապալասենի մրտենական	
	Fagaceae - Հաճարազգի	
	Quercus macranthera Fisch.et.C.A.Mey.ex Hohen -Կաղնի արևելյան կամ խոշորատեղ	ՏԾ
	Oleaceae -Ձիթենազգիներ	
	Fraxinus excelsior L. - Հացենի սովորական	ՏԾ
	Pinaceae - Սոճազգիներ	
	Pinus kochiana - Սոճի կոխի	ՄԾ
	Rhamnaceae - Դժնիկազգիներ	
	Rhamnus cathartica L.- Դժնիկ լուծողական	ՏԹ
	Rosaceae - Վարդազգիներ	
	Cerasus mahaleb (L.) Mill. - Բալենի մահալեբյան	ՏԹ
	Malus orientalis Uglitzkich - Խնձորենի արևելյան	ՏԾ
	Padus racemosa (Lam.) Gilib.(=P. avium Mill.) - Թխենի սովորական	ՏԾ
	Pyrus communis ssp.caucasica (Fed.) Browicz - Տանձենի անտառային կամ կովկասյան	ՏԾ
	Ribes rubrum L. - Հաղարջենի կարմիր	ՏԹ
	Rosa canina L.(glaucous dog rose) - Մարենի սովորական	ՏԹ
	Rosa sosnovskyana - Մարենի Մոսնովսկու	ՏԹ
	Rosa svanetica Crepin - Մարենի Սվանեթի	ՏԹ
	Rosa spinosissimaL.- Մարենի առատափուռ	ՏԹ
	Rubus idaeus L. - Մոռենի սովորական (ազնվամորի)	ՏԹ
	Prunus divaricate Lebed.(=P.cerasifera) - Սալորենի սովորական	ՏԹ
	Crataegus caucasica K.Koch. - Սզնի կովկասյան	ՏԹ
	Sorbus aucuparia L. - Արոսենի սովորական	ՏԹ
	Sorbus kuznetzovii Zinserl. - Արոսենի կուզնեցովի	ՏԹ
	Spiraea hypericifolia L. - Ասպիրակ սրոհունդատերև	ՏԹ
	Salicaceae - Ուռազգիներ	
	Populus tremula L. - Բարդի անտառային կամ կաղամախի	ՏԾ
	Salix viminalis L. - Ուռենի ճիպոտանման (կողովի)	ՏԹ
	Salix alba L. - Ուռենի սպիտակ	ՏԾ
	Salix pentandroides Skvortz. - Ուռենի հնգատեղ	ՏԹ
	Salix caprea L. - Ուռենի այծի կամ այծուռենի	ՏԾ
	Salix pseudomedemii E.Wolf - Ուռենի կեղծ Մեդեմի	ՏԾ/ՏԹ
	Tiliaceae - Լորենազգիներ	
	Tilia caucasica Rupr (=T. begoniifolia Stev.) - Լորենի կովկասյան (լ.բեգոնիատերև)	ՏԾ

	<i>Tilia cordata</i> Mill. – Լորենի մանրատերև	ՏԾ
	Ulmaceae – Թեղազգիներ	
	<i>Ulmus glabra</i> Huds. (= <i>U. elliptica</i> K. Koch) – Թեղի էլիպսաձև	ՏԾ

«Հանքավանի ջրաբանական» պետական արգելավայրի ֆլորայի կազմը

NN	
	1. Apiaceae – Հովանոցավորներ
1.	<i>Astrantia maxima</i> – Աստաղաբույս ամենամեծ
2.	<i>Falcaria vulgaris</i> – Սիբեխ սովորական
3.	<i>Ferula orientalis</i> L. – Նարդես արևելյան
4.	<i>Carum caucasicum</i> Boiss. – Քեմոն կովկասյան
5.	<i>Carum carve</i> – Քեմոն սովորական
6.	<i>Chamaescidium acaule</i> (Bieb.) Boiss. – Հովանոցավոր անցողուն
7.	<i>Chaerophyllum aureum</i> – Շուշանբանջար ոսկեգոծ
8.	<i>Pimpinella confusa</i> Woronow – Անիսոն խառը
9.	<i>P. saxifrage</i> L. – Անիսոն քարաբեկ
10.	<i>Seseli montanum</i> L. – Կապնդեղ լեռնային
	2. Asteraceae – Բարդածաղկավորներ
11.	<i>Achillea millefolium</i> – Հազարատերևուկ սովորական
12.	<i>Anthemis arvensis</i> L. – Անթեմ դաշտային
13.	<i>Artemisia absinthium</i> L. – Օշինդր դառը
14.	<i>Aster alpinus</i> L. – Աստղածաղիկ ալպիական
15.	<i>Bidens tripartita</i> – Կատվալեզու եռաբաժան
16.	<i>Centaurea fischeri</i> Willd. – Տերեփուկ Ֆիշերի
17.	<i>C. montana</i> – Տերեփուկ լեռնային
18.	<i>C. atropurpurea</i> – Տերեփուկ ալկարմիր
	<i>C. cheiranthifolia</i> – Տերեփուկ դենամանուշակագույն
19.	<i>Chardinia orientalis</i> – Շարդինիա արևելյան
20.	<i>Cirsium obvallatum</i> (Bieb.) DC. – Գեղավեր, տատասկ պարուրված
21.	<i>C. rhizocephalum</i> C.A.Mey. – Գեղավեր արմատագլխանի
22.	<i>Cichorium intybus</i> – Ճարճատուկ սովորական
23.	<i>Crepis capillaris</i> – Զամբյուղախոտ մազմզուկներով
24.	<i>Doronicum oblongifolium</i> DC. – Դարունան երկարավուն
25.	<i>Echinops sphaerocephalus</i> – Ոգնագլխիկ գնդագլխիկավոր
26.	<i>Erigeron venustus</i> Botsch. – Գարնանաթարամ գեղեցիկ
27.	<i>Gnaphalium supinum</i> L. – Ականջաբուրդ կծկված
28.	<i>Hieracium cymosum</i> L. – Ճուռակախոտ հովանոցանման
29.	<i>H. caespitosa</i> – Ճուռակախոտ տորֆային

30.	<i>Inula glandulosa</i> Willd. - Կղմուղ գեղձավոր
31.	<i>I. helenium</i> - Կղմուղ բարձր
32.	<i>I. subacaulis</i> Fisch. Et C.A. Mey - Կղմուղ կարճացողուն
33.	<i>Scorzonera meyeri</i> (C.Koch) Lipsch - Խինձ Մեյերի
34.	<i>S. seidlitzii</i> Boiss.- Խինձ Սեյդիլի
35.	<i>Senecio aurantiacus</i> DC. - Հալևորուկ նարնջագույն
36.	<i>Matricaria matricarioides</i> - Երիցուկ երիցուկանման
37.	<i>Taraxacum fulvum</i> - Խատուտիկ կարմրադեղնավուն
38.	<i>T. stevenii</i> (Spr.) DC - Երիցուկ Ստեյվենի
39.	<i>T. officinalis</i> - Խատուտիկ դեղատու
40.	<i>Tanacetum purpureum</i> - Տարկավան մուգ կարմիր
41.	<i>Tragopogon reticulatus</i> Boiss. Et Huet - Սինձ ցանցավոր
42.	<i>T. graminifolius</i> DC. - Սինձ հացահատիկատերև
43.	<i>Tripleurospermum</i> sp - Եռակողմասերմիկ
44.	<i>Telekia speciosa</i> - Եզնակն գեղեցիկ
45.	<i>Onopordon acanthium</i> L- Կառ փշոտ (Կառ)
	3. Apocynaceae - Շնամեռուկազգիներ
46.	<i>Vinca herbacea</i> - Կուսածաղիկ խոտային
	4. Balsaminaceae - Զգայնուկազգիներ
47.	<i>Impatiens nolitangere</i> - Հինածաղիկ սովորական
	5. Brassicaceae - Խաչածաղկավորներ
48.	<i>Alyssum tortuosum</i> Willd. - Վառվռուկ ոլորված
49.	<i>Arabis brachycarpa</i> Rupr. - Արաբախոտ կարճապտուղ
50.	<i>Capsella bursa-pastoris</i> - Հովվամախաղ սովորական (ծոսապաշար)
51.	<i>Cardamine uliginosa</i> Bieb. - Դաշտակոտենճահճային
52.	<i>Coluteocarpus vesicaris</i> (L.) Holboe - Ճթիկ ցանցապարկավոր
53.	<i>Draba bruniifolia</i> Stev. - Ճարտարուկ առատատերև
54.	<i>D. siligiosa</i> Bieb. - Ճարտարուկ պատիճավոր
55.	<i>Isatis canescens</i> DC. - Լրջուն գորշ
56.	<i>Sisymbrium officinale</i> - Աղբակոտեն դեղատու
	6. Boraginaceae - Գողտրիկազգիներ
57.	<i>Echium vulgare</i> - Իժախոտ սովորական
	7. Campanulaceae - Զանգակազգիներ
58.	<i>Campanula aucheri</i> DC. - Զանգակ Օշերի
59.	<i>C. collina</i> Bieb. - Զանգակ բլրակային
60.	<i>C. stevenii</i> Bieb. - Զանգակ Ստեյնի
61.	<i>C. trautvetteri</i> Grossh. - Զանգակ Տրաուվեթերի
62.	<i>C. tridentate</i> Schreb. - Զանգակ եռատամ
	8. Caryophyllaceae - Մեխակազգիներ
63.	<i>Cerastium purpurascens</i> Adams. - Ճոմոուկ մանուշակագույն
64.	<i>Cypsophila tenuifolia</i> Bieb. - Ցմախ նեղատերև
65.	<i>Dianthus cretaceus</i> Adams - Մեխակ կավճային
66.	<i>D. carthusianonum</i> L. - Մեխակ կարթուզյան
67.	<i>D. barbatus</i> - Մեխակ մորուքավոր

68.	<i>Minuartia caucasica</i> (Adams) Mattf. - Մինուարցիա կովկասյան
69.	<i>M. oreina</i> (Mattf.) Schischk. - Մինուցարիա լեռնային
70.	<i>Silene</i> sp. - Ծվծվուկ
71.	<i>S. nutans</i> L. - Ծվծվուկ կախված
72.	<i>S. vulgaris</i> - Ծվծվուկ սովորական
	9. Crassulaceae - Թանձրատերևազգիներ
73.	<i>Sedum annum</i> L. - Թանթոնիկ մեկամյա
74.	<i>S. pilosum</i> Bieb. - Թանթոնիկ մազոտ
75.	<i>S. teillum</i> Bieb. - Թանթոնիկ բարակ
	10. Cyperaceae - Բոշխազգիներ
76.	<i>Carex medwedewii</i> Lesk. - Բոշխ Մեդվեդևի
77.	<i>C. caucasica</i> Stev. - Բոշխ կովկասյան
	11. Dipsacaceae - Ականքազգիներ
78.	<i>Cephalaria gigantea</i> (Ledeb.) Bobr. - Զիվան հսկայական
79.	<i>Scabiosa caucasica</i> - Քոսքոսուկ կովկասյան
	12. Euphorbiaceae - Իշակաթնուկազգիներ
80.	<i>Euphorbia vigata</i> - Իշակաթնուկ ճյուղավորված
	13. Fabaceae - Լոբազգիներ
81.	<i>Anthyllis vulneraria</i> - Վիրախոտ խոցված
82.	<i>A. variegata</i> Soiss. - Վիրախոտ խայտաբղետ
83.	<i>Astragalus incertus</i> Ledeb. - Գազ անորաշ
84.	<i>Coronilla varia</i> L. - Քարաովույտ խայտաբղետ
85.	<i>Genista transcaucasica</i> - Օրոն անդրկովկասյան
86.	<i>Hedysarum caucasicum</i> Bieb. - Կուրկուրան կովկասյան
87.	<i>Lathyrus cicero</i> - Տափուրոջ վարդագույն
88.	<i>Melilotus officinalis</i> - Իշաովույտ դեղատու
89.	<i>Oxytropis cyanea</i> Bieb. - Գառնաովույտ կապույտ
90.	<i>Trifolium medium</i> - Երեքնուկ միջին
91.	<i>T. ambiguum</i> Bieb. - Երեքնուկ կասկածելի
92.	<i>T. canscens</i> Willd. - Երեքնուկ մոխրագույն
93.	<i>T. pratense</i> L. - Երեքնուկ մարգագետնյին
94.	<i>T. trichophalum</i> Bieb. - Երեքնուկ մազմզոտ
95.	<i>Vicia sepium</i> - Վիկ ցանկապատի
	<i>Vicia villosa</i> - Վիկ թավոտ
	14. Gentianaceae - Բոգազգիներ
96.	<i>Gentiana caucasica</i> Bieb. - Բոգ կովկասյան
97.	<i>G. sp.</i> - Բոգ
98.	<i>G. septefida</i> Pall. - Բոգ յոթնամաս
	15. Geraniaceae - Խորդենազգիներ
99.	<i>Geranium ibericum</i> Cav. - Խորդենի վրացական
100.	<i>G. sanguineum</i> - Խորդենի արնագույն
101.	<i>G. pratense</i> L. - Խորդենի մարգագետնային
	16. Hypericaceae - Սրնհունդազգիներ
102.	<i>Hypericum perforatum</i> - Սրնհուդ խոցված

	17. Juncaceae - Կնյունազգիներ
103.	<i>Luzula pseudosudetica</i> V. Krecz. – Փայլուկ նեղատերև
104.	<i>L. spicata</i> (L.) DC. – Փայլուկ հասկիկավոր
	18. Lamiaceae - Շրթնազգիներ
105.	<i>Betonica grandiflora</i> Willd. – Թթվիճ խոշորածաղիկ
106.	<i>Digitalis ferruginea</i> – Մատնոցուկ ժանգոտ
107.	<i>Salvia verticillata</i> L. – Եղեսպակ շրջված
108.	<i>S. glutinosa</i> – Եղեսպակ կաշուն
109.	<i>Scutellaria orientalis</i> L. – Պնակախոտ արևելյան
110.	<i>Stachys rubescens</i> – Արեղախոտ անտառային
111.	<i>S. alpinia</i> L. – Արեղախոտ ալպիական
112.	<i>Melissa officinalis</i> L. – Պատրիջ դեղագործական
113.	<i>Mentha longifolia</i> – Դաղձ երկարատերև
114.	<i>Origanum vulgare</i> – Խնկածաղիկ սովորական
	<i>Thymus</i> sp. – Ուրց
	19. Liliaceae - Շուշանազգիներ
115.	<i>Allium victorialis</i> L. – Սոխ հաղթության
116.	<i>Lilium armenum</i> (Misch. Ex Gross) Mande. – Շուշան հայկական
117.	<i>Ornithogalum transcaucasicum</i> Miser. – Աստղաշուշան անդրկովկասյան
118.	<i>Pushkinia scilloides</i> – Պուշկինիա մկնաստիսանման
119.	<i>Veratrum album</i> – Ջոք սպիտակ կամ կեղծ դանձլամեր
	20. Linaceae - Կտավատազգիներ
120.	<i>Linum hypericifolium</i> – Վուշ (կտավատ) սրոհունդատերև
121.	<i>Linum subbiflorum</i> – Վուշ (կտավատ) երկծաղիկ
	21. Onagraceae - Ապուզանազգիներ
122.	<i>Chamaenerium angustifolium</i> Lam. – Նեղտերևի անգոստիֆոլում
	22. Orchidaceae - Խոլորձազգիներ
123.	<i>Gymnadenia conopsea</i> – Լերկաբշտիկ երկայնատեղջույր
124.	<i>Orchis mascula</i> L. – Խոլորձ արական
125.	<i>Platanthera chlorantha</i> – Թիթեռնիկախոլորձ կանաչածաղի
	23. Papaveraceae - Կակաչազգիներ
126.	<i>Chelidonium majus</i> – Կանթեղախոտ մեծ
127.	<i>Papaver monanthum</i> Trautv. – Կակաչ միածաղիկ
128.	<i>P. orientale</i> L. – Կակաչ արևելյան
	24. Plantaginaceae - Ջղախոտազգիներ
129.	<i>Plantago atrata</i> L. – Ջխաղոտ սևացող (Եզան լեզու)
130.	<i>P. major</i> – Ջղախոտ մեծ
	25. Poaceae - Հացազգիներ
130.	<i>Bromus</i> – Ցորնուկ
131.	<i>Calamagrostis epigejos</i> – Եղեգնախոտ ցածրած
132.	<i>Festuca varia</i> Haenke – Շյուղախոտ խայտաբղետ
133.	<i>Nardus</i> – Փայլասենի
134.	<i>Poa nemoralis</i> – Դաշտավուրկ կաղնուտային

135.	Phleum alpinum L. – Սիզախոտ ալպիական
	26. Polygalaceae - Կաթնախոտազգիներ
136.	Polygala alpicola Rupr.- Կաթնախոտ ալպիական
	27.Polygonaceae -Մատիտեղազգիներ
137.	Polygonum carneum C. Koch – Մատիտեղ մսագույն (Հովվի գավազան)
138.	P. officinalis – Մատիտեղ դեղատու
	28.Polypodiaceae - Բազմատոսիկազգիներ
139.	Dryopteris filix-max - Վահանապտեր արական
	29.Primulaceae – Գնարբուկազգիներ
140.	Primula macrocalyx Bge - Գնարբուկ խոշորաբաժակ
	30.Ranunculaceae – Գորտնուկազգիներ
141.	Aconitum sp – Ընծախոտ
142.	A. orientale - Ընծախոտ արևելյան
143.	Consolida orientalis schod – Դլինյակ արևելյան
144.	Pulsatilla albana - Քնախոտ ալբանական
145.	Ranunculus aragazi Crossh. – Գորտնուկ արագածի
146.	R. brachilobus Boiss. Et Hohen – Գորտնուկ կարճացողուն
147.	R. caucasicus Bieb. – Գորտնուկ կովկասյան
148.	R. sp. – Գորտնուկ
149.	R. oreophillus Bieb. – Գորտնուկ լեռնային
150.	Thalictrum minus – Գնձմնուկ փոքր
	31. Rosaceae – Վարդազգիներ
151.	Alchemilla grossheimii Juz. – Գայլաթաթ Գրոսհեյմիի
152.	A. sericae Willd. – Գայլաթաթ մետաքսյա
153.	Cotoneaster integerrima Medik. – Չմենի ամբողջատեր
154.	C. melanocarpa - Չմենի սևապտուղ
155.	Geum rivale – Մարեմխոտ գետային (շահոքրամ)
156.	Potentilla sp – Մատնունի
157.	P. orientalis – Մատնունի արևելյան
158.	P. reptans – Մատնունի սողացող
159.	Sanguisorba officinalis – Արունխամիկ դեղատու
	32.Saxifragaceae - Քարբեկազգիներ
160.	Saxifraga exarata Will. – Քարբեկ կոտրվող
	33.Scrophulariaceae –Խլածաղկավորներ
161.	Pedicularis condensate Bieb.- Ոջլաղեղ սեղմված
162.	P. sibthorpii Boiss. – Ոջլաղեղ հաստակնճիթ
163.	Rhinanthus minor – Աքլորաբուկ փոքր
164.	Veronica gentianoides Vahl. – Բերենիկե բոգանման
165.	V. orientalis. – Բերենիկե արևելյան
166.	Verbascum orientale – Խոնդատ արևելյան
	34.Thymelaeaceae - Գոճամազգիներ
167.	Daphne glomerata Lam. – Տերևատ լերկատերև
	35. Valerianaceae – Կատվախոտազգիներ

168.	Valeriana sp – Կատվախոտ
169	V. officinalis - Կատվախոտ դեղատու
36. Urticaceae - Եղինջազգիներ	
170.	Urtika dioica L - Եղինջ երկտուն

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայր

«Ջերմուկի ջրաբանական» պետական արգելավայրի մուտքը Ջերմուկ քաղաքից հնարավոր չէր, ինչը պայմանավորված է ուղեգնի իրավիճակից:

Արգելավայրի ֆլորայի ուսումնասիրությունն իրականացվել է Հերիեր գյուղի, Վայոց սարի հարակից հատվածում: Հիմնականում գերակշռում էին քսերոֆիտ բույսերը: Գիտարշավը իրականացվել է երթուղային եղանակով, որտեղ հիմնականում հանդիպում էին՝ Վարդազգիներից–Rosaceae Սզնին–Crataegus, Տանձենին–Pyrus, Խնձորենին – Malus Mill, Մասրենին–Rosa L, Գետնանոճազգիներից – Taxodiaceae՝ Գիհին–Juniperus, Հաճարազգիներից–Fagaceae՝ Կաղնին–Quercus, Ուռազգիներից – Salicaceae՝ Ուռենին – Salix L.:

Հավաքվել է հերբարիում՝ 29 թերթ, տեսակները ճշտելու և ցուցակները թարմացնելու նպատակով:



«Ջիկատար» պետական արգելավայր

Իրականացվել է սերմնային և կոճղաշիվային ուղղությամբ ուսումնասիրություն, ինչի արդյունքում նկատվեց Բոխու-Carpinus և Հաճարենու-Fagus սերմնային վերականգնում՝ բացատային հատվածներում, որի հետևանքով գոյացել է երիտասարդ անտառ: Ազելավայրի տարածքում հիմնական անտառակազմող

տեսակներն են Հաճարենին-Fagus և Բոխին-Carpinus, իսկ Կաղնին-Quercus, Թխկին-Acer, Կեչին-Betula, Մասրենին-Rosa, Մոշենին-Rubus ուղեկցող տեսակներ են:

Կոճղաշիվային վերականգնումը դիտվեց այցելուների կենտրոնին հարակից կանաչապատված հատվածում Շագանակենու-Castanes մոտ, որի շիվերը տերևակալված էին և նախկինում հատված ծառերի մոտ նկատվում էր աճի դինամիկա:

«Զիկատար» պետական արգելավայրի տնկարանում կտրոնավորվել են Բարդի-Populus, ցանվել են Կաղնու-Quercus և Սոսու-Platanus սերմեր: Ընդլայնվել էր Ծնեբեկի-Asparagus դաշտը: Գիտարշավի ընթացքում արգելավայրի այցելուների կենտրոնի հարակից կանաչապատված տարածքից հավաքվել են 54 թերթ հերբարիում, որոնց տեսակները ճշտվում են:

Պտղատու այգու տարածքում կատարվել են լրացումներ՝ Տանձենի – Pyrus, և հիմնվել են ծառուղիներ Բարդի կանաղական-Populus deltoides Morsh. ծառատեսակներով:





Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկ

Կատարված ուսումնասիրությունների ընթացքում, պարզվեց որ դենդրոպարկի ծառաթփատեսակների տեսակային կազմը փոփոխություն չի կրել: Դենդրոպարկի ջերմատանը ցանվել են Սոճի Իտալականի-Pinus Pinea սերմեր որոնց ծիլերի մոտ նկատվել է աճի դինամիկա, որը նոր տեսակ է դենդրոպարկում և նպատակ է հետապնդում Կազմակերպության դենդրոպարկեր և «Ջրվեժ» անտառապարկ տեղափոխելու՝ ծառաթփատեսակների տեսակային կազմը հարստացնելու համար: Քիչ քանակությամբ կտրոնավորվել է Մետասեքվոյա գլիպտոստրոբոիդային-Metasequoia gypstroboides Hu et Cheng տեսակից, վերջիններիս մոտ զգալի աճ էր նկատվում: 2024 թվականի գարնանը կտրոնավորվել են՝ Գիիի սրատերև - Juniperus oblonga M. B., Գիիի բազմապտուղ - Juniperus polycarpus C. Koch., Գիիի վիրգինյան - Juniperus virginiana L., Տոսախ մշտադալար - Buxus sempervirens L.:

Դենդրոպարկ է ներմուծվել և կտրոնավորվել Վարդազգիների Rosaceae ընտանիքի Կերիա ճապոնական-Kerria japonica (L.) DC. թփատեսակը, որը նոր տեսակ է դենդրոպարկի համար:

Ամենօրյա աշխատանքների շրջանակներում խնամվել են վարդերը, էտվել են թփերը և հնձվել է խոտը: Տնկիները ջերմատնից տեղափոխվել են տնկարան:

Հունիս ամսվա տեղացած ուժգին անձրևի և կարկուտի հետևանքով վնասվել են ջերմատան որոշ հատվածներ և կոտրվել են ծառերի, թփերի ճյուղերը:

Աշխատակիցների օգնությամբ վերանորոգվել է ջերմատան ապակիները և տարածքը մաքրվել է կոտրված ճյուղերից:

Դենդրոպարկում մշտապես իրականացվում են խնամքի աշխատանքներ՝ հեռացվել են մոլախոտերը, հավաքվել են ծաղիկների սերմեր և սոխուկներ, քաղհանվել է ջերմատունը և տնկարանը: Դրվել են վարդի կտրոններ:

Վերանորոգվել է ջերմատան վնասված ապակիները: Մաքրվել է դենդրոպարկի տարածքը աշնանային տերևաթափից գոյացած բուսական մնացորդներից: Աղբամանների մի մասը հավաքվել է, նստարանները դեռ տեղադրված են տարածքում այցելուների հոսքի հետ պայմանավորված:


Տեղացած ձյան շերտից մաքրվել են ճանապարհները, թափ են տրվել մշտադալար թփերը:



Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան» դենդրոպարկ

Վանաձորի «Ժ. Սարուխանյանի անվան» դենդրոպարկը գտնվում էր շատ լավ վիճակում՝ մաքուր և խնամված: Ծառաթփերի տեսակային կազմը պահպանված է: Գիտարշավի ընթացքում բուսական աշխարհի ուսումնասիրության, նրանց

տեսակային կազմի ցուցակները թարմացնելու նպատակով տարածքից հավաքվել են հերթարիումներ: Գիտարշավի ընթացքում դենդրոպարկի տարածքում իրականացվում էր խնամքի, թփերի ձևավորման և մաքրման աշխատանքներ: Ճշտվում են դենդրոպարկի տեսակային կազմի ցուցակները, թարմացվում տվյալները:



Բերդի «Սորաններ» դենդրոպարկ

Դենդրոպարկի տեսակային կազմը պահպանվել է, տարածքը գտնվում է խնամված և մաքուր վիճակում: Դենդրոպարկի տեսակային կազմը համալրվել է Կծոխուր ազգիների-Berberidaceae ընտանիքին պատկանող նոր՝ Կծոխուր Սոուլի-Berberis Soulieana տեսակով:

Դենդրոպարկի տարածքում տնկվել են Եղևնու-Picea, Լորենու-Tilia, Հացենու-Fraxinus, Բարդու-Populus, Հոնի-Cornus, Եղրևանու-Syringa տնկիներ և Տոսախ-Buxus թփեր: Տնկարանը գտնվում է խնամված և լավ վիճակում: Դրվել են Թույայի-Thuja, Գիհու-Juniperus կտրոններ:

Դենդրոպարկի տարածքը ամեն օր մաքրվում է թափուկից և կենցաղային աղբից: Իրականացվել է ծառերի չորացած ճյուղերի էտ, ոռոգում և քաղհան:

Իրականացվել են քիմիական պայքարի աշխատանքներ՝ հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի դեմ:

Ներկվել են դենդրոպարկի տարածքի սյուները: Կատարվել է ոռոգման ջրագծի վերանորոգում:

Աշնանային ծառատունկից առաջ կատարվել է խոտհունձ, տնկվել են Մայրիի-
Cedrus, Թույայի-Thuja տնկիներ: Տարածքը ձևակորվել է Սրնգենի-Philadelphus
թփատեսակով: Ճշտվում են դենդրոպարկի տեսակային կազմի ցուցակները:





Իջևանի «Դենդրոպարկ»

Իջևանի դենդրոպարկի տեսակային կազմը վերջին տարիներին զգալի փոփոխություն է կրել, ինչը գրանցվել է 2023 թվականի գիտարշավի ընթացքում:

2024 թվականին իրականացրած դաշտային ուսումնասիրությունների արդյունքում անցյալ տարվա համեմատ այս տարի ծառաթփատեսակները գտնվում էին ավելի լավ վիճակում, ինչը պայմանավորված է այս տարվա մայիս ամսին տեղացած անձրևների հետ:

Ճշտվում և թարմացվում են դենդրոպարկի տեսակային կազմի ցուցակները:

«Զրվեժ» անտառպարկ

«Զրվեժ» անտառպարկում ֆլորայի ուսումնասիրության միջոցառումների շրջանակներում իրականացված աշխատանքների ընթացքում կատարվել է

տեսակային կազմի ցուցակների ճշգրտում նախորդ տարում հավաքված նյութերի հիման վրա: Իրականացված մոնիթորինգի ընթացքում պարզվել է, որ «Ջրվեժ» անտառապարկի որոշ մշտադալար և գեղազարդիչ ծառերը ունեն հատուկ խնամքի, պարարտացման կարիք և տարվել են համապատասխան աշխատանքներ: Գիտության բաժնի աշխատակիցների կատարած շրջայցերի արդյունքում սյունածև թույաների և գիհի բազմապտուղի մոտ արձանագրվել է սնկային հիվանդություններ, վարակի տարածումը կանխելու նպատակով կատարվել է համապատասխան աշխատանքներ:

Անտառապարկի տարածքում ստեղծվել է կենդանի ցանկապատ *Sonchus-Oxyria*, և *Ligustrum* թփատեսակներով: Տնկվել են Արմավաշուշանի-*Yucca* թփեր, Բարդու- *Populus* տնկիներ: Աշնանային ծառատունկին ընդառաջ, փորվել են շուրջ 450 փոսեր:

Անտառապարկում իրականացվում են ոռոգման ցանցի ջրագծերի վերանորոգման աշխատանքներ:

Անցկացվել է մոնիթորինգ՝ անտառապարկում վարձակալների կողմից ներմուծված նոր տեսակների համար, որոնք գտնվում են լավ վիճակում:

1. Մագնոլիա Սուլանժի - *Magnolia soulangana* Soul-Bod
2. Սոճի - *Pinus sp*
3. Սոճի սովորական - *Pinus silvestris* L.
4. Սոճի գելդրիչի - *Pinus heldrichii*
5. Սոճի սև - *Pinus nigra*
6. Սոճի ցածրած լեռնային - *Pinus mugo*
7. Կիպրոս օվալափերև - *Ligustrum ovalifolium* Hassk.
8. Դրախտավարդ խոշորափերև - *Hydrangen macrophylla*
9. Գիհի վիրգինյան - *Juniperus virginiana* L.
10. Սաֆորա ճապոնական - *Sophora japonica* L.

11. Խոստեկ – *Caragana*
12. Սորբարիա արնուառերև – *Sorbaria sorbifolia* L. A. Br.
13. Ճապոնական սերկևիլ – *Chaenomela japonica* Thurd.
14. Գիհի (հիբրիդ) – *Juniperus* stam
15. Գիհի գետնատարած – *Juniperus procumbes*
16. Գիհի թեփուկավոր – *Juniperus squamata*
17. Գիհի վիրգինյան – *Juniperus virginiana* L.
18. Սալորենի Կանզա – *Prunus Kanza*
19. Սալորենի լեռնային – *Prunus mugo*
20. Հուդայաձառ Գրիֆֆիթի – *Cercis Griffithii* Boiss
21. Իլենի ճապոնական – *Euonymus japonica* L. f.
22. Վարդ հիբրիդ – *Rosa hybrida*
23. Վիստերիա – *Wisteria* Nutt.
24. Մայրի – *Cedrus* sp

նոր տեսակներ:

Շարունակվում են անտառապարկի տարածքում դիտարկումները, ճշտվում է տեսակային կազմը և թարմացվում ցուցակները:

Անտառապարկում տեղադրվել են նախազգուշացնող վահանակներ՝ հրդեհներից խուսափելու նպատակով: Անտառապարկում մշտապես կատարվում են տարածքի մաքրման աշխատանքներ: Իրականացվել են ոռոգման աշխատանքներ, խոտհունձ, ծառերի չորացած ճյուղերի էտ: Կտրոնավորվել են գիհիի, տոսախի և թուլայի կտրոններ:

Կազմակերպության գրասենյակային շենքում ցանել են Սեքվոյայի-*Sequoia* սերմեր վերջիններիս մոտ գրանցվել է աճի դինամիկա:

Ստեփանավանի «Սոճուտ» դենդրոպարկից «Ջրվեժ» անտառապարկ են տեղափոխվել Սոճազգիների Pinaceae ընտանիքին պատկանող Մայրի ատլասյան- Cedrus atlantica Manetti, Սոճի Արմանդի-Pinus Armandii Franch., և Վարդազգիների Rosaceae ընտանիքի Կերիա ճապոնական-Kerria japonica (L.) japonica D ծառաթփատեսակները: Ճշտվում են անտառապարկի տեսակային կազմի ցուցակները:

«Ջրվեժ» անտառապարկ


Ը/Ը	Ընտանիք, Ծառատեսակներ
	Ginkgoaceae – Գինկգոազգիներ
1.	Գինկգո երկբլթականի
	Cupressaceae - Նոճազգիներ
2.	Կենսաձառ արևելյան
3.	Կենսաձառ. արևելյան պ.ձ. գնդաձև
4.	Կենսաձառ. արևելյան պ.ձ. բրգաձև
5.	Գետնանոճի լավսոնի
6.	Գիհի սովորական
7.	Գիհի երկարատերև
8.	Գիհի բազմապտուղ
9.	Գիհի կազակական
10.	Գիհի վիրգինյան
11.	Գիհի գետնատարած
12.	Գիհի թեփուկավոր
13.	Թույա արևմտյան
14.	Թույա. արևմտյան պ.ձ. սյունաձև
15.	Թույա. արևմտյան պ.ձ. գնդաձև
	Taxaceae Lindl. – Կենազգիներ
16.	Կենի հատապտղային
	Pinaceae - Սոճազգիներ
17.	Եղևին կովկասյան
18.	Խեժափիճի սիրիական
19.	Եղևնի սովորական
20.	Եղևին կեռիկավոր կամ փշոտ
21.	Եղևին կեռիկավոր կամ փշոտ պ.ձ. արծաթագույն
22.	Սոճի դրիմյան
23.	Սոճի սովորական
24.	Սոճի Գրիֆիտի կամ հիմալայն
25.	Սոճի գելդրեյխի
26.	Սոճի սև


27.	Սոճի Արմանդի
28.	Սոճի ցածրած լեռնային
29.	Սոճի sp
30.	Մայրի sp
31.	Մայրի ատլասյան
Aceraceae - Թխկազգիներ	
32.	Թխկի դաշտային
33.	Թխկի հացենատերև
34.	Թխկի սոսիատերև կամ սրատերև
35.	Թխկի կեղծսոսիատերև, սպիտակ
Anacardiaceae - Աղտորազգիներ	
36.	Դրախտածառ սովորական
37.	Պիստակենի բթատերև
Berberidaceae - Ծորենազգիներ	
38.	Ծորենի (Կծոխուր) արևելյան
39.	Ծորենի Թունբերզի
40.	Ծորենի սովորական
41.	Մահոնիա սովորական կամ սղոցիատերև
Betulaceae - Կեչազգիներ	
42.	Կեչի ելունդավոր
43.	Կեչի թավոտ
44.	Բոխի կովկասյան կամ սովորական
45.	Տխլենի սովորական
Buxaceae - Տոսախազգիներ	
46.	Տոսախ մշտադալար
Caprifoliaceae - Ցախակեռասազգիներ	
47.	Ցախակեռաս ծաղկակիցավոր
48.	Ցախակեռաս կովկասյան
49.	Ցախակեռաս իբերիական (վրացական)
50.	Կտակենի սև
51.	Ձյունապտղիկ սպիտակ
52.	Բոնչի գերիմաստի
53.	Բոնչի սովորական
Celastraceae - Իլենազգիներ	
54.	Իլենի սովորական կամ Եվրոպական
55.	Իլենի ճապոնական
Cornaceae - Հոնազգիներ	
56.	Հոնի
57.	Ճապկի հարավային
Corylaceae - Տխլազգիներ	
58.	Բոխի կովկասյան կան սովորական

59.	Տխլենի սովորական
Elaeagnaceae - Փշատազգիներ	
60.	Փշատենի նեղատերև պ.ձ. մշակովի
61.	Փշատենի արևելյան
62.	Չիչխան դժնիկանման
Fabaceae - Բակլազգիներ	
63.	Կարագանա ծառանման (խոստեկ)
64.	Սոֆորա ճապոնական
65.	Հուդայածառ չինական
66.	Հուդայածառ Գրիֆֆիթի
67.	Ոլրոնածառ արծաթափայլ
68.	Ռորինիա կեղծակացիա
69.	Լաբուռունդում սովորական կամ ոսկե անձրև
Fagaceae A. Br. - Հաճարազգիներ	
70.	Հաճարենի արևելյան
71.	Կաղնի շագանակատերև
72.	Կաղնի վրացական
73.	Կաղնի արևելյան կամ խոշորատեղ
Grossulariaceae - Կոկոռչազգիներ	
74.	Հաղարջենի ոսկեգույն
75.	Հաղարջ. սև
Hippocastanaceae - Ձիակասկազգիներ	
76.	Ձիակասկ սովորական
Hydrangeaceae - Դրախտավարդազգիներ	
77.	Սրնգենի կովկասյան (կեղծ հասմիկ)
78.	Դրախտավարդ խոշորատերև (հորտենզիա)
Juglandaceae - Ընկուզազգիներ	
79.	Ընկուզենի հունական
Malvaceae - Տուղտազգիներ	
80.	Հիբիսկուս (Բադրջուկ) սիրիական
Moraceae - Թթազգիներ	
81.	Թթենի սպիտակ
82.	Թթենի սպիտակ պ.ձ. լացող
Magnoliaceae - Մագնոլիազգիներ	
83.	Մագնոլիա Սուլանժի
Oleaceae - Ձիթազգիներ	
84.	Ֆորսիցիա (Ոսկեզանգ) միջանկյալ
85.	Հացենի սովորական
86.	Հացենի նշտարածև
87.	Եղրևանի սովորական
88.	Եղրևանի հունգարական

89.	Կիպրոս օվալատերև
Platanaceae - Սոսազգիներ	
90.	Սոսի արևելյան
Rhamnaceae - Դժնիկազգիներ	
91.	Բեկտենի լաստենատերև
Rosaceae - Վարդազգիներ	
92.	Ամելանխիտեր կլորատերև
93.	Նշենի սովորական
94.	Նշենի Ֆենցլիի
95.	Նշենի նաիրյան
96.	Նշեն բուխարա
97.	Ծիրանենի սովորական
98.	Ծիրանենի կուլտուրական (մշակովի)
99.	Կեռասենի թռչնի
100.	Բալենի ալեհեր
101.	Բալենի մահալեբյան
102.	Խենոմելես ճապոնական (սերկկիլ ճապոնական)
103.	Չմենի սևապտուղ
104.	Չմենի բազմաձողիկ
105.	Սզնի մուգ-արնագույն
106.	Սզնի կովկասյան
107.	Սզնի արևելյան
108.	Սերկկիլենի սովորական
109.	Խնձորենի կուլտուրական (մշակովի)
110.	Խնձորենի վայրի անտառային
111.	Ջկեռենի սովորական
112.	Թխենի մահալեբյան (բալենի)
113.	Թխենի սովորական
114.	Դեղձենի սովորական
115.	Սալորենի չոված, շլորենի
116.	Սալորենի կուլտուրական
117.	Սալորենի Կազանա
118.	Սալորենի լեռնային
119.	Մամխենի
120.	Տանձենի կուլտուրական (մշակովի)
121.	Տանձենի կովկասյան
122.	Տանձենի սովորական
123.	Տանձենի ուռատերև
124.	Մասրենի սովորական (շան)
125.	Մոշենի անատոլիական
126.	Արոսենի հայկական

127.	Արոսենի սովորական
128.	Ասպիրակ ճապոնական
129.	Ասպիրակ ուռատերև
130.	Ասպիրակ Վանհուտի
131.	Սորբարիա արոսատերև
132.	Կերիա ճապոնական
Salixaceae - Ուռազգիներ	
133.	Բարդի բուլլեի
134.	Բարդի կանադական
135.	Բարդի նրբագեղ
136.	Բարդի դափնետերև
137.	Բարդի սև
138.	Բարդի բրգաձև
139.	Բարդի Սիմոնի
140.	Կաղամախի
141.	Ուռենի բարելոնյան
142.	Այծուռենի
143.	Ուռենի բարձր
144.	Ուռենի դեղնաճյուղ, ծիրանագույն
Sapindaceae - Օճառազգիներ	
145.	Կելլեյտերիա հուրանավոր
Tamaricaceae - Կարմրանազգիներ	
146.	Կարմրան բազմաճյուղ
Tiliaceae - Լորենազգիներ	
147.	Լորենի կովկասյան
Ulmaceae - Թեղազգիներ	
148.	Թեղի գնդաձև
149.	Թեղի տերևառատ
150.	Թեղի հարթ (ողորկ)
151.	Փռչնի կովկասյան
Papilionatae Taub - Թիթեռնածաղկայիններ	
152.	Վիստերիա
Vitaceae - Խաղողազգիներ	
153.	Խաղող անտառային
154.	Խաղող. Սովորական
Ebenaceae - Էբենազգիներ	
155.	Խուրմա սովորական կամ կովկասյան
Աղավնիճազգիներ - Verbenaceae	
156.	Կարիոպտերիս ալեհեր
Արենախոտազգիներ - Lythraceae	
157.	Լազերստրեմիա հնդկական ձև կարմիր







«Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի

պարտականությունները կատարող՝

Լևոն Տեր-Սիմոնյան

Կատ՝

Գիտական աշխատող՝ Հայարիի Գրիգորյան

Գիտական աշխատող՝ Սոնա Վարդանյան

Էկոտուրիզմի մասնագետ - գիտական աշխատող՝ Սոնա Վարդապյան